

Տիկ: Անասնոց մորթն ամբողջութեամբ հանուած, կը գործածուէր Հրէից մէջ՝ փոխադրութեան եւ պահպանութեան ջրոյ (Ծննդ. ԻԱ, 14), կաթի (Դատ. Գ, 29), եւ մանաւանդ գինւոյ (Յես. Թ, 4. Ա. Թագ. ԺԶ, 20. Մտթ. Թ, 17): Նոյնը կար ուրիշ ազգաց ու մեր քով ալ շատ հնէն: Հայերը «տկաւ» ջուր կը բերէին՝ զլուսաւորիչ տանջելու համար (Ագթ. 95), ու գինի կը պահէին «ի տիկ» (Ալաւ. Է): Մեր այս վերջին պարագայն միջին դարէն վեր ալ տեսնելու ենք:

Հարսդակ: Բնիկ հայ բառ, ուստի եւ սպաս, նախորդին մէկ տեսակն էր, մորթէ շինուած պարկաձեւ նեղաբերան փոքր ու թեթեւ անօթ, եւ հոմանիշ յն. ἀσκαποτύνη բառին, որով ճանապարհորդը չափաւոր գինի կ'առնուր միասին՝ իւր գործածութեան համար (Յղթ. Ժ, 5):

Գդուս: Կարծեմ աղքատութիւնն իսկ գինւոյ սպաս ըրած էր զայս, յիշուած Մխիթ. Ապարանեցիէն՝ այսպէս. «Գինի ի դրոյ եւ ի տկոյ եւ ի կարասոյ առեալ» (ի Հյկզ.): Յայտնի է՝ թէ յարակից զոյգ անօթոց պէս գինւոյ պահարան էր. բայց հաւանօրէն կը գործածուէր նաեւ գինւոյ փոխադրութեան անօթէ անօթ:

Հանապ: Յիշուած է վաստակոց գրքէն՝